

ունի տպելու.— ապուրին եփին, խալովիսի պասին)։ շինտը ես կը հարցունու՜մ ձեզի աս հայնակ կիտողդ հէքիմը մէկալ հայնակ չիկիտցող հէքիմին խարէր ստակ կառնէ՜։ Հէջ թահմին չիմ անիւ ինչո՞ւ։ անոր համար որ հայնակ կիտէ, տպմա հայնակ կալաճի կանէ ու հայ ըլալովը չէ քի ամընչնալ՝ կը պարծընայ պիլէ։ Չունքի հայնակ կիտնալը, հային ժամին հաւա տարիմ ժողովուրդը ըլալը, կասին, պէթէր՝ քէտէր է խելքը միաբը ըսպ ըլալուն։ Մեր տեղը մէքամ թիլքիի բունութըով եալըճի ունինք, որ աս պանըս կիտնալով հէջ հայնակ կալաճի ունինք, որ աս պանըս կիտնալով հէջ նայնակ կալաճի չի աւնիլ ու չի կրիլ, տպմա եալ հային վրան կը խընտայ. աս պանը շտէ նարա մէջ խելք ու կիտուլին ճանցիլ է հալթը «եալճի վար, եալճի վեր» պէթէր պատիւ կուտայ ու մեծ ալ հախ կապիլ է։

Հեղինակի միւս երգերը տեղական ըստրաւով գըրուած բոլորն էլ մի մի բանաստեղծական գոհարներ են և քանի աւելի շատ ժամանակ անցնի՝ այնքան կը մեծանայ Պատկանեանի այս տեսակ երկերի նշանակութիւնը, որովհետեւ կալազուի, որ այս երկերը բոլորովին մասնաւոր նշանակութիւն չունին, ալլ հեղինակի անխնայ ծաղրի ենթակալ երևոյթները մեր քաղաքական և հասարակական կեանքի ընդհանուր պայմանների արդիւնք են, որ նրա հերոսները իրանց ալլանդակ վարքով ու կեանքով նոյնպիսի տիպեր են և ոչ անցողական նշանակութիւն ունեցող մասնաւոր մարդկանց կենսագրութիւններ։ Մի ուրիշ ժամանակ մենք կվերադառնանք Պատկանեանի բոլոր գրուածներին և յուսով ենք տալ մեր ընթերցողներին մի աւելի մանրամասն տեսութիւն մեր բանաստեղծի ստեղծագործութեան։

Գ.Ա.Ր. ԵՆԳԻՐԱՐԵԱՆ

«ՆՐԸՐԸՑԻ ՄԱՏԵՆԱԳՐԵՐ ՀՍՅԱՏԱՆԻ ՄԱՍԻՆ»

Վեննայի Հանդիսի 1903 տարուայ համարներում Բ. Խալաթեանը հրատարակել է այս վերնագրով թարգմանական յօդուածներ։ Տարուայ սկզբի համարներում Հայաստանի և

Ալիլիկոյ նահանգները ու գաւառների ցուցակն ըստ Խնճիճեանի և Ալիլանի արտատպելուց յետոյ, որի նպատակն ինձ համար հասկանալի չեղաւ, ասլըիլի համարում, եր. 122, հհ. անցնում է բուն Նիւթին, սկսելով թարգմանել Բելադորի պատմչի «Պիրք նուաճմանց աշխարհաց» (کتاب فتوح البلدان) յայտնի պատմական երկի մի գլուխը, որ կրում է «Հայաստանի նուաճումները» վերնագիրը: Քանի որ մեր պատմութեամբ և մատենադրութեամբ հետաքրքրուողները յիշեալ թարգմանութիւնից, իբրև նոր աղբիւրից, պէտք է օգտուեն, ուստի ես կարևոր էի համարել իւր ժամանակին մի քանի նկատողութիւններ անել այդ թարգմանութեան մասին Արարատի էջերում, որոնք սակայն ընթերցողներին մեծամասնութեանը անյայտ մնացին: Այդ խնդիրը ես արդէն մոռացութեան էի տուել, երբ վերջերս Բաղձալէպ հանդիսի այս տարուայ օգոստոսի տեսրի մէջ կարդացի Սկսնակ բանասէրի մի գրախօսականը վերայիշեալ թարգմանական հատուածները վերաբերեալ: Գրախօսը կտրական կերպով յայտարարում է, թէ Խալաթեանի ստորագրութիւնը կրող հատուածները թարգմանութիւն են տոքթոր Մորթմանայ գերմաներէն լեզուով հրատարակած մի գործին Ա. մաքէն, որ և ի հայ թարգմանեալ և հրատարակեալ է Վարադետ Իւթիւճեանի կողմանէ նախ իր Մասիսի 1874 տարւոյ 1542, 1543, 1545, 1547, 1548 և 1550 թիւերուն մէջ և ապա մասնաւոր տեսրակաւ ալ հրատարակուած է կարծեմ սա խորագրով: «Հատածք պատմութեան Հայոց, քաղեալք յարարացի պատմագրաց ի ձեռն Տոքթոր Մորթմանայ արեւելագիտի»:

Սկսնակ բանասէրը հաւաստիացնում է, առանց սակայն համեմատութիւններով ցոյց տալու, թէ Բ. Խալաթեան այդ հատուածների «տեքստը հաւատարիմ թարգմանած (ընդօրինակած?), սակայն ծանօթութիւնները բաւական ճարպիկութեամբ ընդլայնած, համառօտած ու փոփոխած է, քօղարկիլու համար իր աղբիւրն, և չյնպէս մի ձևացուցած է, թէ ինք իսկ քաղած է արաբ պատմագրերէն. դործ, որ չպիտի կրնար ընել անչուչտ, քանի որ ինք տեղեակ չէ արաբերէնի»:

Որ աստիճանի հիմնաւոր են Սկսնակ բանասիրի այս խիստ նկատողութիւնները, ես անձեռնհաս եմ դատելու, ձեռքի տակ չունենալով—և առհասարակ տեսած չլինելով—Վ. Իւթիւճեանի հրատարակութիւնը. սակայն հակուած եմ կարծելու, թէ Խալաթեան բնագրից է օգտուել և ոչ Մորթմանի

Թարգմանութիւնից, որովհետեւ դժուար է ընդունել, որ Մորթմանի պէս մի արեւելագէտ այն աստիճանի տգէտ լինէր արաբերէնին, որ տար այնպիսի մի վայրիվերոյ Թարգմանութիւն, ինչպիսին է Հանդիսի համարներում լոյս տեսածը. Պ. Սալաթեանի Թարգմանութեամբ Բեյազորու պատմութեան այդ կարեւոր հատուածը միանգամայն թերի ու յեղաբեկուած է ներկայանում հայ ընթերցողներին:

Թուելով այն անձանց անունները, որոնք բերանացի աւանդութիւններ են հաղորդել իրեն, Բեյազորին ասում է (Եր. 193, տող 2 ներք.) «Նոցա աւանդածներից մի մասը մերժեցի, միւսներին առաւելութիւն տալով» (de Goeje Թարգմանում է, BeI. Gloss. Եր. 43, մի մասը միւսով լրացրի), այս նախադասութիւնը կարեւոր է մատենագրական տեսակէտից, ցոյց է տալիս պատմագրի քննական ոգին, որ և պարզ երևում է պատմութեան շարունակութեան մէջ. նա արդարեւ լսած աւանդութիւններին անպայման հաւատ չի ընծայում, այլ քննադատօրէն է վերաբերւում. Բ. Սալաթեան լիջեալ ճախարհասութիւնը Թարգմանել է. «Նոցա պատմածը ես միմեանց կցեցի եւ մի առ մի կրկնեցի», որով Բեյազորին ներկայանում է մեզ մի զիւրահաւան, սովէն մի լսածին առանց այլապիտութեան հաւատացող ու բառացի կրկնող մարդ: Ըստ Բեյազորու (Եր. 104, տ. 6, վեր.) Հայաստանի յունական մասը կառավարւում էր Արմենիակոսի տէրը (صاحب آرمينيا) Արմենիակոս բառը նախադասութեան մէջ նախընթաց բառին յատկացուցիչ է և կարող է միայն մի տեղի—երկրի, նահանգի կէս—անուն նշանակել: Ըստ Իբն Խորդադբեհի¹⁾, որի ցուցումները Փոքր Ասիայի աշխարհագրական բաժանումների մասին քաղել է Գեյցեր իւր Die Genesis der Byzantinischen Themenverfassung աշխատութեան մէջ, որ Թարգմանաբար հրատարակւում էր Հանդիսում, յունաց 12 Պատրիկներից 6ը կառավարւում էին կայսրութեան նահանգները. դոցանից մէկն էր Արմենիակի պատրիկը (Ibn Chord հր. de Goeje, Եր. 109). Իբն Խորդադբեհի որոշում է այս նահանգի աշխարհագրական գիւղը (Եր. 108) ասելով, որ սահմանակից է Անդորային: Ըստ Կոդաւայի²⁾

1. † 844-ի և 848ի միջոցին. տ. Բրոկելմանն, Gesch. der arab. Lit, I, 225.

2. † 922. Բրոկելմ. նոյնը, 228.

Արմենիակ մի վարչական շրջան էր, 'ամալ (عَمَل) Հայաստանի հիւսիս արեւմտեան կողմը (Qod. եր. 255, հր. de Goeje)։ Աւելի ճիշտ որոշում է այս նահանգի աշխարհագրական դիրքը Իբն ալ Աթիր ³⁾ իւր Լիակատար պատմութեան մէջ (Chronik, ed. Torn-perg III, 65) իւր ժամանակ Արմենիակոս գտնուում էր Ղլիճ Արալանի որդոց իշխանութեան տակ և ամփոփում էր Մալաթիա, Սիվաս, Կեսարիա, Կոնիա և սահմանակից տեղերը, մինչև Կոստանդնուպօլսի նեղուցը։ (خَلِيجَ الْقَسْطَنْطِينِيَّة) Այս կարևոր ցուցումները Բ. Խալաթեանին յայտնի չեն եղել, ուստի և թարգմանել է «Արմենիակոս իշխանն», փոխանակ «Արմենիակոսի իշխանն», թէև նախագասութիւնն ինքն ըստ ինքեան իրաւունք չի տալիս այդպէս թարգմանելու ⁴⁾։ Հայաստանի (Վրաստան և Աղուանք միասին) նախկին վիճակը ներկայացնելիս Բելադորին ասում է, (եր. 194, տ. 7, վ.) որ Խաղարները արշաւում և ասպատակում էին և երբեմն հասնում էին մինչև Դայնալար. թարգմանութեան մէջ կարգում ենք Խաղարներ կարշաւէին ճրկրի խորքերը և երբեմն ևլն. ընդգծած խօսքերը բնագրում չկան։

Պերոզի որդի Կաւատի մասին Բելադորի պատմում է, որ չինեց Շիրուան երկրի և Ալանաց դրան մէջ տեղը թրծած աղիւսից պարիսպ, իսկ պարսպի հանդէպ (կամ երկարութեամբ) 360 քաղաք. այդ քաղաքների տեղը որոշելու համար պատմչի ցուցումը կարևոր է, և հէնց այս կարևոր ցուցումը թարգմանութեան մէջ չկայ. ըստ Խալաթեանի Կաւատ չինում է ի միջի այլոց «թրծած կաւից պարիսպ, իսկ ղըանից յետոյ 360 քաղաք»։ Ապա գալիս են թարգմանութեան մէջ հետևեալ տողերը. «այս տեղերում նա բնակեցրեց ժողովուրդ, որ կռիւց Սիսական ևլն»... Պարզ է, որ նա գերանունն այստեղ վերաբերում է Կաւատին, ուրեմն այս և յետագայ գործերը,—Շաքիի, Գամբեճանի և Դոդանիոյ դռների շինութիւնը Առանում, Սուղղաբիլի ⁵⁾ շինութիւնը Վրաստանում, Պերոզկաւատի, Ղա-

3. † 1234, Բրոկելմ. նոյնը, եր. 345.

4. Մասնաւոր խօսակցութեան մէջ իմ նկատողութեանը պ. Խալաթեան պատասխանել է, թէ ինքը այդ սխալը յետոյ է հասկացել.

5. Սուղղաբիլի Խոսրով Անուշըրուանի ձեռքով շինուելու մասին տես նաև Tabari III, 1416. Ibn al Athtir VII, 45.

զիկէ, Բարիբա դռների, Ալանաց դրան, Սահյութի, Գարգման և Շամշուդէ բերդերի շինութիւնը,—այս ամենը վերագրում է թարգմանիչը Վաւատին, մինչդեռ ըստ Բելադորու այս բոլոր դործերը կատարողն է Վաւատի որդին Խոսրով Անուշըռուան։ Շփոթութիւնն առաջ է եկել նրանից, որ թարգմանիչը բնագրից երեք տող (եր. 194, տ. 3—5 ներք.) մէջ է տուել։ Այս երեք տողերի բառացի թարգմանութիւնն է. «ապա թագաւորեց Վաւատից յետոյ նրա որդին Անուշըռուան Խոսրով որդի։ Վաւատայ և շինեց Շարիբան քաղաքը և Մասկատ քաղաքը, ապա շինեց Բաբ-էլ-Արուար (Դրանց դուռն) քաղաքը. իսկ դրունք կոչուեցու պատճառն այն է, որ նա շինուած է լեռների միջի մի անցքի վրայ»։ սրան հետեւում է բնագրի մէջ այն, ինչ որ թարգմանիչն է պատմում. «Այս տեղերում նա բնակեցրեց ժողովուրդ կըն»։

Դոդանիոյ (Մովդէից ?) դրանց շինութիւնն յիշելով, Բելադորին (եր. 194 տ. 1 ն.) մի շատ կարևոր տեղեկութիւն է հաղորդում այդ ժողովրդի ցեղագրութեան համար. այդ նախադասութիւնն է. «սոքա (գոգանաց իք) մի համայնք են (ձև) որ ասում են, թէ իրանք Խուզայմայի որդի Դոդանի *ցեղից են*»։ թարգմանութեան մէջ կարգում ենք. «և դրունք Դոդանիոյ, բայց տեղի բնակիչք կը պնդեն, թէ շինել է Դոդան Բ. Ասադ, Բ. Խուզայմա» (?!)։ Արաբական գրութեան անձանօթ մէկին այս չփոթութիւնը միանգամայն անհասկանալի կը լինի. խընդիրն այն է, որ *ցեղ* և *շինեց* բառերը արաբերէնում դրւում են միատեսակ, և եթէ ձայնաւորի նշաններ դրուած չեն, կարդացւում են, նայելով կապակցութեանը, բա՛նի (ցեղ և) բա՛նա (շինեց)։ ամբողջ մեղքը ծանրանում է հրատարակչի վրայ, որ ձայնաւոր նշանները չէ դրել. Բ. Խալաթեան կարդացել է երկրորդ ձևով, և *ցեղը* դառել է թարգմանութեան մէջ *շինեց*, թէպէտ և այդ բառից առաջ բացառական *من* (մին) նախադրութիւնը կայ, որին գոյական պիտի հետևի. ինչպէս արդէն յիշուեցաւ, բնագրի որոշ, ճիշտ արտայայտութիւնները թարգմանութեան մէջ չեն պահպանուած, ուստի և պատմական և աշխարհագրական կարևոր ցուցումներն ստացուել են խիստ անորոշ։ Բելադորի թսում է, որ Խոսրով շինեց Դուրդուքիյա, որ տասներկու դուռ է. Խալաթեան թարգմանում է. «շինեց (Վաւատ) Դուրդուքիյա (քաղաքը), որ ունէր 12 դուռ», այս նախադասութիւնն արաբերէն պիտի լինէր *وَلَا*

عَشْرَ بَابَا, իսկ բնագիրն է *بَابَا وَهِيَ اثْنَا عَشَرَ* (և սա 12 դուռ է): Յնտագայ նախագաստութիւնը կասկած չի թողնում, որ այստեղ խօսքը քաղաքի դռների մասին չէ. Բելադ. խօսքերն են. «այդ դռներինց իւրաքանչիւրը մի բարաշէն դղեակ է»: Ըստ Բելադորու Խոսրով դարձրեց Սուզդարիլ քաղաքը Վրաստանում թշնամեաց դէմ *զօրանոց*, այսինքն այնպիսի քաղաք կամ աւան, որտեղ բերդապահ կամ սահմանապահ զօրք է նստում. ըստ Խալաթեանի (Կաւատ) դարձրեց այն «թշնամեաց դէմ *դիտանոց*»: Ըստ Բելադորու (եւ. 195. տ. 3, վ.), «Վրաց երկրի այն մասում, որ սահմանակից է Յունաստանին, շինեց (Խոսրով) մի դղեակ, որ կոչւում է Դուռն Պերոզկաւատ, մի դղեակ, որ կոչւում է Դուռն Լազիկա, և մի դղեակ, որ կոչւում է Դուռն Բարկա (կամ Բարկայ ?)». ըստ Խալաթեանի *Յունաց սահմանագլխի վրայ շինեց* (Կաւատ) դուռն Պերոզկաւատ, Դ(ուռն) Լազիքա, և Դ. Բարքայ ամրոցները»: Բելադորուն յայտնի է եղել, որ յոյն—արաբական (դրանից առաջ յոյն—պարսկական) սահմանը ձգւում էր Միջերկրական ծովի ափից մինչև Կովկաս լեռները, ուստի և ընթերցողին անորոշութեան մէջ չթողնելու համար որոշ ցոյց է տալիս յիշեալ շինութեանց աշխարհագրական դիրքը, «Վրաց երկրի այն մասում, որ մօտ է Յունաստանին». պ. Խալաթեան այս ճիշտ որոշումն արդեօք կարեւոր չէ համարել, թէ յոյն—արաբական և յոյն—վրացական սահման նոյնն է կարծել:

Մենք գրեթէ ամբողջը նորից պիտի թարգմանէինք, եթէ կանգ առնէինք ամէն մի անճշտութեան վրայ. մեր նպատակն է սակայն բնագրի և թարգմանութեան այն տարբերութիւնները ցոյց տալ, որոնք միանգամայն յեղաշրջում են Բելադորու պատմութեան այդ, մեզ համար կարևոր, հատուածի միտքը: Բելադորի պատմում է (եւ. 196, 7 ն.), թէ Խոսրով Անուշ-ըռուան Բաբ—էլ—Աբուաբի պարսպի մուտքի վրայ 100 հոգի պահապան կարգեց, *մինչդեռ առաջ նոյն տեղի պահպանութեան համար հարկաւոր էր յիսուն հազար զինուոր*. Խալաթեան թարգմանում է... 100 մարդ հեծելազօր դրեց մուտքը պաշտպանելու համար, *ապա այդտեղ կարհը* կար 5000 (հինգ հազար) զօրք պահելու: Բնական է. որ պարսպի շինութիւնից առաջ սահմանի պահպանութիւնն աւելի դժուար էր, ուստի և պարսիկներն ստիպուած էին 50000 (և ոչ 5000) զինւոր պահել այնտեղ, իսկ 100 զինուոր բաւական էր ըստ պատմի պարսպի

չինութիւնից յետոյ. Թարգմանիչն ընդունել է ^{آن} ^د (նրանից յետոյ, երբ—առաջ) իբրեւ ^د (յետոյ).

Ըստ բնագրի (եբ. 196, 5 ն.) Խոսքով Անուշըուան Թող-նում է Կովկաս լեռների իշխաններին իրանց իշխանութեան մէջ շահի տիրադոսով. դրանցից էին Ֆիլանի իշխանը,— Ֆիլան-շահ, Մասկաթի իշխանը, որի իշխանութիւնը Բելադորու ժամա-նակ վերացել էր, Լիրանի իշխանը— Լիրանշահ. Թարգմանու-թեան մէջ չփոթուել են երկրների անունները իշխանների ա-նունների հետ և ստացուել է Վես Ֆիլանին, որ էր Ֆիլանշահ... Մասկատին, որի տէրութիւնը Թուլացած էր (?... Իրանին, որ կը կոչուէր Իրանշահ, Շարվանին, որ կը կոչուէր Շարվանշահ. նոյն երես (Հանգ. ամս. Յունիս, 177.) ծան. 5. Խալաթեան հետեւելով Մարքարտին (Erānsahr, 119) ուղղում է ^{ایران} — ^{ایران} այս սրբազրութիւնը մեր կարծիքով անտեղի է, քանի որ ալստեղ խօսքը Կովկասեան լեռներում գտնուած մի նահանգի մասին է. հաւանական չէ, որ երկու տեղում ևս (^{ایران} ^{ایران})

^{ایران} ձեռագրի աղաւաղումով բացատրուին, մանաւանդ որ արտագրողների համար Իրան բառը շատ աւելի ծանօթ և սո-վորական էր, քան Լիրան, ուրեմն և հակառակ չփոթութիւնը, ^{ایران} փոխանակ ^{ایران} ի աւելի հաւանական էր.

Ըստ բնագրի (եբ. 197, 5 ն) Յունաց երկիրը՝ վարչակա-նապէս բաժանուած էր զանազան մասերի, որոնք կառավար-ւում էին առանձին իշխաններով. Արմենիակոսին իշխում էր Նրանցից Սէկը, որի մահից յետոյ երկրի վրայ իշխեց Նրա կինը, որ կոչւում էր Կալի. պարզ է, որ այդ նախադասութեան մէջ Արմենիակոս երկրի անուն է և ոչ իշխանի, մինչդեռ Թարգ-մանութեան մէջ կարդում ենք. «Նրանցից (իշխաններից ի հար-կէ) մէկը Արմենիաքուս իրան թագաւոր հրատարակեց (?). նոյն սխալը կրկնում է նաև մի ուրիշ նախադասութեան (եբ. 197. 4 ն.) Թարգմանութեան մէջ: Բելադորի պատմում է (եբ. 197. 7 ն.) Թէ Հաբիր իրն Մասլամա արչաւեց Հայաստանի վրայ 6000, ըստ ոմանց 8000 հոգով Ասորիքի և Միջագետքի զօրքե-րից. Խալաթեան Թարգմանում է. «Հաբիր արչաւեց 16000, ըստ այլոց 18000 զօրքով Ասորիքի և Միջագետքի ընակիչներին»: Թուերի այս չփոթութիւնը պատահական, կամ տպագրական սխալի արդիւնք կը համարէինք, եթէ նոյնն ուրիշ տեղում ևս կրկնուած չլինէր. ըստ բնագրի (եբ. 197, 1 ն.) Մոավիյա ու-ղարկում է Հաբիրի մօտ 2000 մարդ. ըստ Խալաթ. Թարգմա-

նութեան՝ 1000. Սալման զնում է Հաբիրի մօտ 6000 մարդով
Քուեֆայի զօրքերից (Եր. 198, 4 վ.), ըստ Խալաթեանի՝ 16000
բարեկական (?) զօրքով. ըստ բն. (197, 5.) Հաբիր մնում է
Վալիկալայում իւրայիններով միասին մի քանի ամիս, ըստ
Թարգ. մի ամիս. ըստ բն. (198, 6 ն.) Օսման պատուիրում է
Վալիդին՝ ուղարկել Մոսլիյային օգնութեան (յոյների դէմ)
8000 մարդ, ըստ Թարգ.՝ 18000, նկատելու է նաև, որ Խա-

լաթեան **أهل** բառը Թարգմանում է բոլոր դէպքերում բնակիչ,
ժողովուրդ, և այնպէս է դուրս գալիս, թէ արաբացոց զօրքը
բաղկացած էր ասորիքի և միջագետքի տեղացի բնակիչնե-
րից. այսպէս՝ Եր. 197, 7 և 2 ն. **أهل الشام و الجزيرة** Թարգ-
մանած է Ասորիքի և Միջագետքի ժողովուրդ, Եր. 198, 9 վ.
أهل الكوفة — բաքելացի, Եր. 198, 10 և 3 ն. **أهل الشام** —
ասորիք. սակայն այս բոլոր դէպքերում ոչ թէ բնիկ ժո-
ղովուրդն է, այլ այդ երկրներում բնակուող արաբները, արաբ
զօրքը:

Առաջ տանենք համեմատութիւնը, և կը տեսնենք աւելի
տարօրինակ չփոթութիւններ. Բեկադորին պատմում է, (Եր.
198, 8 ն.) որ Սալման իբն Ռաբի'ա Օսմանի խալիֆայութեան
օրով ուղարկուեց Հայաստան, գերեց և աւարեց և դարձաւ
Վալիս իբն Սկրայի մօտ, որը Մոռիլի Հատիսայումն էր,
25 թուին (շիրէէ). Թարգմանուած է. ըստ Սալման վերադառնում
է Ալվալիգ բ. Օբբայի մօտ, ըստ ասանդութեան (?) Մոսու-
լի բնակիչների այս բանը տեղի ունեցաւ 25 թուին: Խա-
լաթեան չփոթել է այստեղ միմեանց հետ **حديث** և **حديث** ա-
ռաջինը նշանակում է լուր, պատմութիւն, աւանդութիւն, իսկ
երկրորդը տեղի անուն է: Թարգմանիչ ուղադրութիւնն ենք
հրաւիրում նոյն Բեկադորու պատմութեան 184 Եր. 7. ն. հե-
տեւալ նախադասութեան վրայ, որ միանգամայն հաստատում
է մեր խօսքը.

فلما كانت سنة ١٢٩ شَخَّصَ المنصور عن بغداد حتى نَزَلَ حَدِيثَ الموصل
قالوا/ و لما اختَطَّ هَرْمَةُ الموصل
وَأَسْكَنَهَا الْعُزْرَ أَتَى الْحَدِيثَ وَكَانَتْ قَرْيَةً قَدِيمَةً فِيهَا يَلْعَتَانِ وَ أَيْتَاتِ
النَّبَارَى... فَسُمِّيَتِ الْحَدِيثَ لِأَنَّهَا بَعْدَ الْمَوْصِلِ... وَ يُقَالُ أَنَّ هَرْمَةَ
نَزَلَ الْحَدِيثَ أَوَّلًا

Այսպէս ուրեմն Հատիսան մի աւան էր Մոռիլի մօտ, մի
հին աւան, որտեղ կային երկու եկեղեցի և քրիստոնեաների

տներու կարևոր չեմ համարում ամբողջ հատուածը բառացի թարգմանել, յուսալով որ Խալաթիան բնագիրը կը հասկանայ և կը համոզուի, որ քաղաքի անունը թարգմանել է Շրատ աւանդութեան Մոսուլի բնակիչներին»:

Նման շփոթութիւններ են նաև հետեւեալները. Բելադո-
րին (հր. 194, 4 վ.) ասում է, որ իրեն պատմել են *երկու
կարնեցիներ*՝ Մուհամմետ (իդէպ, ոչ Մահմետ) իբն Բիշր և
իբն Վարզ. թարգմանութեան մէջ կարդում ենք... «Բ Բիշր և
իբն Վարզ Քալիլան»։ ստիպուած ենք հայ ընթերցողին
բացատրել. թէ ինչպէս *երկու կարնեցիներ* խօսքը դառել է
Քալիլան. Խալաթեան ընդունել է القاليان իբրև յատուկ անուն
կամ մականուն, մինչդեռ այդ երկակի թիւ է القالى յարաբե-
րականից, որ նշանակում է կարնեցի: Այսպէս նաև Արտաշատ
անուանը հետևում է բնագրի մէջ մի բացատրութիւն — و هي
قرية القرمز բառացի նշանակում է. սա գրմզի (որդան կարմրի)
աւանն է. թարգմանութեան մէջ զրմզը հասկացուել է յատուկ
անուն.... «Արտաշատ, որ է ալ-Քիւրմիզ»: Սակայն պ. Խա-
լաթեան իր արաբագիտութեամբ դեռ աւելի մեծ սխալագրի է
է անում մեզ. ըստ բնագրի (204, 1 ն.) Մոսալիյա ուղարկել
էր Հաբիբ իբն Մասլամային ընկալով Օսմանին օգնութեան,
երբ սա պաշարուած էր. թարգմանիչը մեզ հաւատացնում է,
թէ «Մոսալիան ուղարկած էր Նրան Ջայշ (?!) Օսմանին օգ-
նութեան», և դեռ ծանօթութեամբ էլ փորձում է դրա տեղը,
որ միմիայն իւր գլխում գոյութիւն ունի, Մեդինայի յրջակայ-
քում ցոյց տալ: Ամբողջ գաղտնիքը նրանումն է, որ جيش
բառը, որ բանակ է նշանակում, թարգմանիչն ընդունել է իբրև
յատուկ անուն, արաբական ձևը جيش որ նշանակում է
քանակի մէջ, ընկալով, թարգմանութեան մէջ դուրս է եկել
(դէպի) Ջայշ: Պ. Խալաթեանին դժուար թէ յայտնի չլինի, որ
մեր նախորդիւ տրականը (կամ նախորդիւ հայցականը) արաբե-
րէնում արտայայտուում է կամ հայցական հոլովով կամ الى
(և ոչ في) նախադրութեան միջոցով:

Ինչպէս արդէն առիթ ունեցանք համոզուելու, արաբա-
կան բառերի արտաքին տեսքը ձգել է թարգմանիչն մոլորու-
թիւնների մէջ Դուլին քաղաքի բնակիչներին տուած թղթի մէջ
(հր. 200, 6 ն.) Հաբիբ ապահովութիւն է խոստանում ի միջի
այլոց նոցա աղօթատներին. թարգմանութեան մէջ *աղօթա-
տուն* բառը դառել է *առնետուր*, այն հասարակ պատճառով,

որ **بَيْع** (եզակի **بَيْع** = եկեղեցի), նայնպէս է գրուում, ինչպէս

են **بَيْع** (նաև **بَيْع**) = առևտուր: Այս դէպքում սակայն յայտք է թիւրիմացութիւն տեղի ունենաւ, քանի որ հրատարակելը ձայնաւոր նշանները դրել է. նոյն սխալը կրկնուում է նաև Հաբիբի՝ Թիֆլիսի բնակիչներին տուած թղթի մէջ: Պատմելով (Եր. 199, 8 վ.) Կալիկալա քաղաքի պաշարումը 133 թ. յունաց կայսեր կողմից ուղարկուած Գուսան (?) անունով հայի ձեռքով, Բելադորին աւելացնում է, թէ այդ քաղաքի բնակիչներն այդ ժամանակ քիչ էին. ըստ Թարգմանչի Կուսան եկաւ և պաշարեց քաղաքը մի քանի օր: Դուռնի բնակիչներին տուած թղթի բնագրում ասուած է, «մենք պայմանի համաձայն մեր խօսքին հաւատարիմ կը մնանք, որչափ ժամանակ որ դուք հաւատարիմ մնաք և զխահարկ ու հողահարկ վճարէք»։ Թարգմանած է. «մենք պարտաւոր ենք մեր պարտքը ձեր վերաբերմամբ կատարել, մինչև որ դուք ձերը մեր վերաբերմամբ կատարէք»։ Եր. 202, 4 վ. Հաբիբի՝ Թիֆլիսի քաղաքացիներին ուղղած թղթից յետոյ Բելադորի բերում է *Ջառուս Իըն Արդուլլահի* նոյն քաղաքի բնակիչներին ուղղած թղթի պատճենը. բնագրի բառերն են. «Ջառուս իըն Արդուլլահ էլ Հաքամիյ գրեց Թիֆլիսի ժողովրդին մի թուղթ, որի պատճէնն է»... հետևում է թուղթը։ Թարգմանելը Հաբիբի թղթին անմիջապէս կցում է. «սորա պատճէն գրեց Տիֆլիսի բնակիչներին Ջառուս ի. Արդուլլահ ալ Հակամի»։ այնպէս է հասկացուում, թէ Ջառուս գրել է նախընթաց, այն է Հաբիբի թղթի պատճէնը Պ. Խալաթեան գոնէ ուշադրութիւն դարձնէր այս երկրորդ թղթի բովանդակութեան վրայ, որ շատ տարբեր է առաջինի բովանդակութիւնից, Ըստ բնագր. (Եր. 203, 5 վ.) Թարթառ (ի դէպ **الثور** երբէք չի կարելի Զուրդուր տառադարձել ինչպէս Թարգմանչին է անում, և իզուր է առաջարկում **الثور** կամ **الترتر** սրբագրութիւնը, ի համապատասխանում է մեր թիւն գտնուում էր Բարդայից մի փարսախից պակաս հեռաւորութեան վրայ. ըստ Թարգմ. այդ գետը քաղաքից սակաւ մղոնով հեռու էր.— Ըստ բնագրի (Եր. 203 5 վ. հհ.) Բարդայի բնակիչները փակեցին նրա (Սալմանի) առաջ քաղաքի դռները, Սալման նեղեց (կամ պաշարեց) քաղաքը մի ժամանակ, ... ըստ Թարգմ. «իսկելով բնակիչներին դռների յետեւը, նա մի քանի օրուայ ընթացքում գրաւեց քաղաքը»։ ապա մոռանալով նախընթաց տողերը՝ շարունակում

թիւնը թարգմանում է. «բնակիչը խաղաղութիւն կապեցին նորա հետ և բաց արին դռները»:—

Բուդայի մասին պատմիչն ասում է (Եր. 203, 4 ն.) թէ Հայաստանի, Ատրպատականի և Շիմշատի կողակալն էր. ըստ թարգմանչի Բուդա հովանաւոր հանդիսացաւ Հայաստանին, Ատրպատականին և Շիմշատին. Եր. 205, 4 ն. հհ. Սուլէյման բէն Աբդուլմէլիք Հայաստանի վրայ կուսակալ է կարգում Ատիյ բէն Ատիյին... իսկ Սուլէյմանից յետոյ նրան (Ատիյին) Հայաստանի վրայ է կարգում Օմար բէն Աբդուլ Ազիզ խալիֆը (Օմար II) Ատիյի անունով է կոչում է Բայլականի գետը نهر عدي . այս հատուածը թարգմանուած է. «Սուլէյման ի. Աբդալլահ (?) կառավարեցրեց Հայաստանի վրայ Ադի ի. Ատի... ապա նա նշանակեց Օման բէն Աբտուլ Ազիզին, փայտակարանի ىه عدي ի տիրովը»: Եթէ թարգմանութիւնը միայն ունենանք մեր առաջ իբրև աղբիւր, ստիպուած պիտի լինենք ընդունելու, որ Օմար իբն Աբդուլազիզ խալիֆը Հայաստանի վրայ կուսակալ է նշանակուած եղել, (1?) և նորա անունով ասացել է Բայլականի գետը نهر عدي անունը. Սուլէյմանի և Օմար II-ի օրով Հայաստանի կուսակալ եղել է Ատիյ բ. Ատիյ. (Հայաստանի առաջ կուսակալների մասին տես իմ հետազոտութիւնը. Zeitschr. für arm. philologie, 1903. Heft III, S. 179). Նոյնը առանձին գրքով լոյս տեսած, Armenien unter der arabischen Herrschaft: 1903 թ. 38 ff.

Այս կարճ նկատողութիւնները կարծում ենք, միանգամայն բաւական են, ցոյց տալու համար, որ Բ. Խալաթեանի թարգմանութիւնը Հայոց պատմութեամբ պարապողներին և հետաքրքրուողներին բացի նոր ճիշտ տեղեկութիւններ չտալուց, մոլորութիւնների մէջ միայն կարող է ձգել, ուստի և ոչ մի արժէք չունի:

ԴՐ. Մ. ՂԱԶԱՐԵԱՆ

«Բանքերի» երկու աստղը եւ Արեւմտեան Հայոց գրականութիւնը

Գրականութեան և արուեստի Վանքերը-ը իւր երկու գրքակներով ապագրել է «Թիւրքիոյ Հայոց արդի գրականութիւնը» վերնագրով մի ընդարձակ տեսութիւն: